ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<11> ապրիլի 2016թ. N 54-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ N 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՎԱՉԻԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարիկ Բաղալյանի և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Նելսոն Սարգսյանի համատեղ զեկուցագիրը և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Վաչիկի Շահբազյանի բացատրությունը՝

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 68-րդ կետի 15-րդ և 17-րդ ենթակետերի պահանջները խախտելու համար «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Վաչիկի Շահբազյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ